

8974

20 JUN 2006

ՀԻՐԱՏԱՐԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՍՆԵՐ» ԱՄՍԱԳՐԻ

19 NOV 2010

№ 17

88
2-90

ար

Գ. Շ. Բ. Բ



ԱՐԳՈՆԱԻՈՐԴՆԵՐ

1002
6814
2001

Թարգմ. Ստ. Լիսիցեան



Գ Ի Յ Լ Ի Ս

ԵՆԵՏՐԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵՐԻ, ՊՈՒԽ Ը 7

1910

Handwritten text in Armenian script, possibly a title or author name.

Handwritten text in Armenian script, possibly a date or reference number.

44-5885-47

1

Purple stamp or mark.

15.07.2013

3974



ԱՐԳՈՆԱԽՈՐԴՆԵՐ

Յունական աանդումին

1. ՅԱՍՕՆ ԵՒ ՊԵԼԻՍՍ:

Կրեթէոսը հիմնել էր Թեսալիայում (Հիւսիսային Յունաստան) իր համար մի տէրուծին և քաղաք Յոլկոս անունով և կտակել էր իր աւագ որդի Այսոնին: Բայց այնպէս չեղաւ, ինչպէս ուղեցել էր Կրեթէոսը. կրտսեր որդին Պելիասը յափշտակեց հօր գահը և իր եղբայր Այսոնի որդի Յասոնին ուղարկեց կենտաւրոս Քիրոնի մօտ դաստիարակելու: Քիրոնը նրան կրթեց մի զօրեղ հերոս:

Երբ Պելիասը ծերացաւ, մի օր պատգամախօսը գուշակեց նրան որ վախենայ «մի ոտը բորիկ» մարդուց:

Յասոնը արդէն քսան տարեկան էր: Նա ծածուկ փախչելով Քիրոնի մօտից, ուղևորեց իր հայրենիքը՝ Պելիասից հայրական գահը ետ պահանջելու համար: Ճամփին պիտի անցնէր մի վարարած գետակի վրայով: Երբ մօտեցաւ գետակին, տեսաւ այնտեղ մի պառաւ կին, որը

սկսեց աղաչել տեղափոխել իրեն միւս ափը: Դա աստուածների մայր Հերան էր, որն ատում էր Պելիասին, բայց Յասօնը նրան չը ճանաչեց: Պատանին կարեկցութեամբ խտտեց պառաւին և անցաւ գետակը: Անցնելու ժամանակ մէկ կօշիկը խրւեց տիղմի մէջ, բայց Յասօնը չուզեց ետ դառնալ և ճամփան շարունակեց մի սոր բոբիկ:

Շուտով նա հասաւ Յօլկոս քաղաքը, ուր հէնց այդ ժամանակ արքան զոհաբերութիւն էր անում ծովի աստուած Պոսէյդոնին: Երբ Յասօնը, ճամփորդական զգեստները հագին, ուսերի վրա թափւող շիկահեր գանգուրներով և ճամփից կարմըրած դէմքով մօտեցաւ ամբոխին, ամենքը հիացած մնացին պատանու գեղեցկութիւնից և վեհ տեսքից: Իսկ արքան՝ եկւորի վրա աչք ձգելով, երբ տեսաւ որ մի ոտը բոբիկ է, վախեցաւ և ակամայ յիշեց պատգամախօսի գուշակութիւնը:

Չոհաբերութիւնը վերջացնելով, նա մօտեցաւ Յասօնին, և սկսեց հարցնել թէ ո՞վ է, ո՞ւմ ցեղիցն է և ինչո՞ւ է եկել Յօլկոս:

«Ես Այսօնի զաւակն եմ,— մեղմ պատասխանեց Յասօնը, — ինձ կրթել է Քիրոնը և ահա եկել եմ նորից իմ հայրական տունը տեսնելու»:

Այս խօսքերը լսելով՝ Պելիասը ցոյց էլ չը տւաւ թէ վախենում է եղբօր որդուց, այլ շատ քնքշաբար վարւեց նրա հետ, հինգ օր հինգ գիշեր նրա պատւին խնջոյքներ սարքեց: Միայն

վեցերորդ օրը սկսեց նա բանակցել պատանու հետ: Յասօնը այսպէս էր ասում.

«Դու ինքդ գիտես, որ ես իսկական արքայի զաւակն եմ և օրէնքով ամեն բան այսօտեղ ինձ է պատկանում: Բայց ես ձեռք չեմ տալ քո հօտերին և արօտատեղիներին, թող առաջւայ պէս քեզ մնան. մէկ բան եմ միայն պահանջում քեզանից—վերադարձրո՛ւ ինձ իմ հայրական գահն և զաւագանը»:

Պելիասն էլ հանգիստ պատասխանեց նրան:

«Կը կատարեմ քո պահանջը, բայց առաջ կատարիր իմ մի խնդիրքը, գլուխ բեր մի գործ, որ ես ծերուկս ինքս անկարող եմ անել: Վաղուց է երազումս երևում է Փրիքսի ուրւականը և պահանջում ինձանից գնամ Կողքիս Այէտոս արքայի մօտ և այնտեղից փոխադրեմ նրա աճիւնը և ոչխարի ոսկէ գեղմը: Այդ սխրագործութիւնը քեզ համար էի պահել: Երբ կը վերադառնաս այնտեղից՝ այդ սխրագործութիւնն անելով, քոնն է և՛ գահը, և՛ թագաւորութիւնը»:

Յասօնը համաձայնեց. զլիւի չէր ընկնում որ նենգամիտ հօրեղբայրը իր կորուստն է փրկուում: Չէր պատկերացնում այդ ճամփորդութեան բոլոր վտանգները:

Ոսկէ գեղմի պատմութիւնն էլ այս էր: Կրթութէնսի ազգական Աթամանտը Փրիքս անունով, մի որդի ունէր, որին շատ էր հալածում խորթ մայրը: Այդ հալածանքներից փրկելու համար ամ-

պերի աստուածունի նեփելէն փախցրեց նրան հօր պալատից և իր աղջիկ Հելլէի հետ նստեցնելով թևաւոր ոսկեգեղձ ոչխարի վրա, անց կացրեց նրանց շատ գետերով, ծովերով և երկիրներով: Բայց խեղճ Հելլէն վայր ընկաւ ոչխարի մէջքից և խեղաւեց, երբ անցնում էին այն ծովով, որն աղջկայ անունով այնուհետև կոչւեց Հելլէսպոնտոս—Հելլէի ծով: (Այժմ Դարդանելլի նեղուց): Փրիքսը աջողութեամբ հասաւ Կողքիս, ուր թագաւորում էր Այէտոս արքան: Նա պատասպարեց տղային իր մօտ և երբ տղան մեծացաւ, նրա հետ ամուսնացրեց իր աղջիկներէից մէկին—Քալկիոպէին:

Ոսկեգեղձ ոչխարը Փրիքսը զոհ բերաւ Զևս բարձրագոյն աստծուն, իսկ նրա ոսկէ գեղձը Այէտոսը նւիրեց պատերազմի աստուած Արէսին և կախեց նւիրական անտառում, ուր պահպանութիւնը յանձնեց հրէշ - վիշապին: Երկնքից որոշաւ թէ էր որ այդ ոսկէ գեղձը պիտի արքայի կեանքի պահպանը լինէր: Ոսկեմազ մորթը շատ շատերին էլ գրաւել որպէս մի անգին գանձ, արդէն քանի քանի հերոսներ փորձ էին արել գեղձը ձեռք բերելու, և Պելիասը զուր չէր համոզուած, թէ իր եղբօր որդին կը գրաււի այդ հարուստ աւարի յոյսով:

Յասօնը ճամփա ընկաւ: Յունաստանի հրուշակաւոր հերոսներից շատերը մասնակցեցին նրա արշաւանքին: Աթէնաս աստուածունու ցուցմուն-

քով յայտնի վարպետ Արգոսը շինեց մի հրաշալի 50 նաթի նաւ, որ իր շինողի անունով կոչւեց Արգօ: Աթէնասը Զևսի անտառից նւիրական կաղնու մի կտոր բերաւ ու ամրացրեց նաւի դեկին: Երբ նաւը պատրաստ էր, արգոնաւորդները (այսպէս նրանք իրենց կոչեցին իրենց նաւի անունով) տեղերը վիճակով իրար մէջ բաժանեցին: Յասօնին ընտրեցին առաջնորդ, հերոս Տիփիային ղեկավար, իսկ հեռատես Լիկիոսին ուղեցոյց: Թիերի մօտ նստեցին հուշակաւոր Հերակլէսը, Թեսէոսը: Զևսի որդիք՝ Կաստոր և Պոլուքսը, երգիչ Որփէոսը և ուրիշ նշանաւոր դիւցազուններ ու հերոսներ:

Մեկնելուց առաջ զոհ մատուցին Պոսէյդոնին և ծովային ուրիշ աստուածներին: Միահամուռ ձեռքն առան թիերը յիսուն թիավարները, աջողակ բամին փքեց առագաստները և նաւը թթթե սահելով՝ դուրս եկաւ նաւահանգստից ու սլացաւ բաց ծովով: Ուրախ առաջանում էին հերոսները, ճարպկորէն անցնելով ստորջրեայ ժայռերի միջով, բայց միւս օր յանկարծ փոթորիկ բարձրացաւ և քշեց նաւը Լեմնոսի նաւահանգիստը:

Այդ կղզու վրա կանայք սպանել էին բոլոր ամուսիններին, որոնք իրենց դաւաճանել էին, և կառավարութիւնը իրենց ձեռքն էին առել: Միայն թագունի Հիպսիպիլէն իր հայր Տօտոսին էր խղճացել և նաւով ուղարկել ծովի միւս

ափը, բայց ճամփին փոթորիկը փշրել էր նաւը՝
իսկ դժբախտ Տօտոսին փրկել էին ու պատու-
պարել ձկնորսները:

Երբ Արգօն մօտեցաւ կղզուն, կանայք ցըն-
ծութեամբ ընդունեցին հիւրերին և նրանց
պատւին շքեղ խնջոյքներ սարքեցին: Նրանք ու-
զում էին բռնի պահել եկած տղամարդներին ի-
րենց հետ ամուսնացնելու համար:

Շուտով չէին հեռանայ հերոսները այդ հիւ-
րասէր կանանց մօտից, եթէ չերևար Հերակլէսը,
որ մնացել էր նաւը պահելու, և չը սկսէր նախ
ատել իր թեթևամիտ ընկերներին, յիշեցնելով որ
վաղուց ժամանակ է ճամփա ընկնելու: Յասօնը
յիշեց իր պարտականութիւնը և մնաս բարև ա-
սելով թագուհուն՝ վերադարձաւ նաւը: Նորից
թիւրը ձեռքն առան հերոսները, զեկավարը ար-
ձակեց պարանը, և նաւը արագ սլացաւ ծովով,
իր ետև թողնելով գեղեցիկ Լեմնոս կղզին...

2. ՀԵՐԱԿԼԷՍ ԵՒ ՀԻԼՍՍ

Թրակիայի քամին արագ քշեց նաւը գէպի
Փրիւզիական անապատի ափերը, ուր մի կղզու վրա
ապրում էին խաղաղ Գոլիոններ, իսկ նրանց կող-
քին՝ վայրենի անյաղթ հսկաներ: Այդ կղզու տէ-
րըն էր բարեպաշտ Կիսիկոսը:

Երբ նա լսեց արգոնաւորդների գալուստի
մասին, իր ամբողջ ժողովրդի հետ ընդառաջ

ելաւ և ուրախութեամբ ողջունելով հիւրերին,
խնդրում էր խարիսխ ձգել այդտեղ ու իրեն հիւր
լինել:

Խնջոյքի ժամանակ հերոսները պատմեցին
արքային թէ ուր են գնում, և նա մի քանի խոր-
հուրդներ տաւ առաջիկայ ճամփորդութեան
համար:

Յաջորդ օրը նա տարաւ հիւրերին մի բար-
ձրը սար՝ այնտեղից կղզու զիրքը ցոյց տալու
և յարմար ճամփա ընտրելու: Բայց յանկարծ
անտառից դուրս եկան սոսկալի հսկաներն ու
սկսեցին ահագին ժայռեր ձգել այն ծովածոցի
մուտքը փակելու համար, ուր կանգնած էր Ար-
գօն: Հերակլէսը, որ մնացել էր նաւը պահպա-
նելու, սկսեց նետեր արձակել նրանց վրա ու
նրանցից շատերին սպանեց:

Այդ միջոցին վրա հասան և միւս հերոսնե-
րը և նետերով ու նիզակներով կոտորեցին բո-
լոր հսկաներին: Տակից կտրած ահագին ծառե-
րի պէս տապալւել էին վիթխարիները ծովածո-
ցի ափին, և ձկներն ու թռչունները լափում է-
ին նրանց մարմինները:

Այդ յաղթութիւնից յետոյ արգոնաւորդնե-
րը խարիսխը հանեցին և դուրս գնացին ծովը:
Երկարատև փոթորիկներից յետոյ նրանք հասան
Կիոս քաղաքը: Այստեղ բնակիչները զրկաբաց
ընդունեցին նրանց և զինի ու բազմազան կերա-
կուրներ բերին նրանց համար: Միայն Հերակլէսն

էր, որ հրձարւեց այդ հիւրասիրութիւնից և գնաց անտառ, իր համար նոր աղեղ շինելու: Մի յարմար ծառի բուն ընտրելով՝ նա արմատահան արաւ նրան և սկսեց թի շինել, մինչդեռ իր ուղեկիցը, պատանի Հիլասը գնաց աղբիւրի մօտ՝ իր բարեկամի համար ջուր բերելու:

Երբ զեղեցիկ պատանին մօտեցաւ աղբիւրին և լուսնու շողը ընկաւ նրա վայելչակազմ կերպարանքի վրա, որ կռացել էր ջրի երեսին, յաւերժահարսները տեսան նրան և՛ նրա զեղեցկութիւնով հրապուրւած, քաշեցին իրենց մօտ, ջրերի սառը խորքը: Հերոսներից մէկը, Պոլիփեմոսը լսեց Հիլասի վերջին աղաղակն և իսկոյն շտապեց օգնութեան, բայց շատ ուշ հասաւ տեղը և անկարող եղաւ փրկել դժբախտին: Երբ նա տխուր լուրը յայտնեց Հերակլէսին, սա զայրոյթից ու վշտից իրեն մոռանալով՝ վազեց աղբիւրի մօտ և տղային այնտեղ չը գտնելով՝ ամբողջ գիշեր գուր թափառում էր անտառում, յոյս չը կորցնելով նրան փրկելու:

Մինչ այդ լուսաբացին յանկարծ փչեց աջողակ քամին: Տիփիաս ղեկավարը ընկերներին առաջարկեց օգտւել այդ քանից ու իսկոյն մեկնել: Նաւորդները հետևեցին նրա խորհրդին և ուրախ սլացան ծագող արևի առաջին շողերով: Այդ ժամանակ միայն նկատեցին, որ Հերակլէսը իրենց հետ չէ, նոյնպէս երկու նրա ուղեկիցները, որոնք մնացել էին ամփին: Հերոսների

մէջ վէճ ծագեց, շարունակեն արդեօք ճամփան առանց ընկերների թէ՞ վերադառնան կղզին նւրանց առնելու:

Յասօնը ոչ մի բառ չէր ասում և մոռյալ ականջ էր դնում այդ վէճին... Այն ժամանակ Տելամոնը զայրացած բացականչեց «Ինչպէս կարող ես այդպէս հանգիստ նստել տեղդ: Չը լինի՞ թէ դու վախենում ես՝ թէ Հերակլէսը փառքդ կը նսեմացնի: Միայն մի բան կասեմ քեզ, Յասօն. եթէ նոյնիսկ ոչոք չուզենայ, ես մենակ կը վերադառնամ թողած ընկերների մօտ»: Եւ այս ասելով նա մօտ վազեց ղեկավարին, բռնեց նրա ուսերից և կամենում էր հարկադրել նաւը ետ շրջել, բայց ուղեկիցներից երկուսը նրան պահեցին:

Այդ բոպէին ջրից երևաց ծովային ասուած Գլաւկոսը և իր հօր ձեռքով կանգնեցնելով նաւը՝ ասաւ. «Ի՞նչու էք վիճում, հերոսներ: Ի՞նչն է ստիպում ձեզ, բարձրագոյն Ձևսի կամքին հակառակ, քարշ տալ ձեզ հետ քաջարի Հերակլէսին Այէտոսի աշխարհը: Ճակատագիրը նւրան ուրիշ սխրագործութիւններ է նախ որոշել: Ի՞նքնակամ մնաց նա կղզու վրա Հիլա ընկերովը գտնելու, որին յափշտակեցին սիրահար յաւերժահարսները»:

Այս ասելով՝ ասուածը նորից անհետացաւ ծովի խորքերում, և Տելամոնը իր ձեռքը դնելով Յասօնի ուսին՝ շփոթւած խօսեց:

«Մի բարկանայ ինձ վրա, բարեկամ, վրդովմունքը ստիպեց ինձ անմիտ խօսք բերնից թըոցնել: Թող այսուհետև ամեն ինչ մեր մէջ լինի առաջւայ պէս:

Եւ այդպէս Պոլիփեմոսը քնաց Միսիացիների մօտ և այնտեղ մի քաղաք հիմնեց, իսկ Հերակլէսը գնաց իր ճամփով, այնտեղ, ուր կանչում էր նրան Զևսի կամքը:

3. ՊՈՒՈՒՔՍ, ՓԻՆԷՈՍ, ՀԱՐՊԻԱՆԵՐ ԵՒ ՍԻՄՊԼԵԳԱՐՆԵՐ

Յաջորդ օրը արգոնաւորդները մօտեցան մի հրաւնդանի ծովափին: Այստեղ ապրում էր բեբրիկների վայրենի արքայ Ամիկոսը: Ամեն մէկին ով ափն էր իջնում, նա ստիպում էր իր հետ ըմբշտամարտի ելնելու: Արդէն հարևաններից շատերին էր պառկեցրել այդպէս նա կուրի դաշտում:

Տեսնելով Արգօ նաւը, Ամիկոսը ընդառաջ եկաւ ու բարձր կանչեց. «Լսեցէք ինձ, ծովի շըրջմողիկներ. թող ձեզ յայտնի լինի որ ոչոք օտարականներից չի համարձակուում իմ երկիրը թողնել առանց նախօրօք ինձ հետ մենամարտելու: Պատրաստեցէք ձեր լաւագոյն ըմբշտամարտիկներին և դուրս եկէք իմ դէմ, երես առ երես, եթէ ոչ՝ բաններդ վատ է»:

Կեդայի որդի Պոլուքսը, որ լաւագոյն ըմ-

բշտամարտիկն էր ամբողջ Յունաստանում, ուրախ ընդունեց Ամիկոսի հրաւերն և ժպտալով կանչեց նրան: «Զուր ես հայհոյում, բարեկամ: Մեր մէջ կը գտնուի և քեզ արժանի հակառակորդ»:

Գազազած առիւծի նման էր նայում Բեբրիկը խօսողի վրա, իսկ սա կանգնած էր հանդարտ, իր ուժին վստահ ու քաջարի:

Նա մեկնեց իր հօր բազուկները համոզելու որ չեն թուլացել երկար թիավարելուց, և հպարտութեամբ նայեց իր ձեռների վրա: Յետոյ նա իջաւ նաւի վրայից՝ ընկերների ուղեկցութեամբ և իր հակառակորդին հանդիպեց ծովափին:

Արքայի սպասաւորը բերեց ու գետին ձգեց ըմբշտամարտի ամուր փոկերը:

«Ընտրիր որն ուզում ես, առանց վիճակ ձրգելու, ասաւ Ամիկոսը, շուտով կը համոզես որ ես վատ մարտիկներից չեմ և ամեն փոկով էլ կը կտրողանամ քեզ լաւ ապտակ շրխկացնել»:

Պոլուքսը ժպտալով առաւ աւելի մօտիկ ընկած փոկերը և տաւ որ ընկերները իր բունցները փաթաթեն:

Նոյնը արաւ և Ամիկոսը, և մարտը սկսեց:

Սոսկալի ուժով էր յարձակուում օտարագին Պոլուքսի վրա և մի ըոպէ դադար չէր տալիս, մի հարւած միւսի ետևից տեղալով: Բայց Պոլուքսը ճարպկօրէն խուսափում էր այդ հարւածներից և անփնաս էր մնում: Շուտով նա նրկատեց իր հակառակորդի թոյլ կողմերը և իր

հերթին սկսեց հարւածել նրան: Այդպէս զարկում էին իրար հօրները, և նրանց ծնօտները ճռճուով էին անընդհատ ապտակներից:

Միայն երբ յոգնածութիւնից շնչները կըտըւեց, նրանք կանգ առան շունչ քաշելու համար:

Կարճատև դադարից յետոյ կռիւը նորոգւեց, և շուտով Պոլուքսը, օգտւելով Ամիկոսի վրիպակից, սոսկալի զարկով ջախջախեց նրա գանգի ոսկորը, այնպէս որ նա ցաւից ճչալով՝ իսկոյն չօքեց:

Արգոնաւորդները ցնծագին աղաղակեցին, իսկ բեբրիկները՝ տեսնելով իրենց արքայի պարտութիւնը, մահակներով յարձակեցին Պոլուքսի վրա, և նորից սկսեց կատաղի կռիւը:

Յոյներն աւելի լաւ էին զինւած, և շուտով բեբրիկները պարտւած՝ փախուստի դիմեցին անկարգ ցրիւ լինելով:

Յաղթողները յարձակեցին արքայական հօտերի վրա և հարուստ աւար վերցրին իրենց հետ:

Երկար խնջոյք էին անում նրանք՝ գլխները դափնեայ պսակներով զարդարած, հրճուած էին Որփէոսի նւագածութեամբ ու փառաբանում յաղթող Պոլուքսի արիասրտութիւնը:

Այնուհետև նրանք շարունակեցին ճանապարհը և շուտով հասան Թրակիայի ափերին, ուր ապրում էր Ագեսորի որդի Փինէոս արքան, որը իր կեանքը մեծ վշտի մէջ էր անց կացնում: Արևի աստուած Ապոլոնը նրան կուրացրել էր, ու-

րովհետև նա ի նշարն էր գործ դրել դուշակելու ընդունակութիւնը, որ իրեն վերուստ շնորհւած էր: Բացի այդ, վայրենի Հարպիա թռչունները, որ բուն էին դրել նրա պալատի մօտ, թոյլ չէին տալիս նրան մի բան ուտելու: Այդ թռչունները ինչ որ կարելի էր, տանում թոցնում էին նրա սեղանից, իսկ ինչ որ թողնում էին, այնպիսի գարշահոտութեամբ էին վարակում, որ ոչ միայն անկարելի էր լինում բերանը դնել, այլ նոյն իսկ դժւար էր լինում կանգնել այդ ապականւած կերակրի մօտ:

Ջեսի պատգամախօսը ասել էր Փինէոսին, որ նա միայն այն ժամանակ կազատւի այդ պատժից, երբ Բորէասի որդիք յունական նաւով կը գան և կը փրկեն իրեն:

Եւ ահա հէնց որ ծերունին իմացաւ արգոնաւորդների գալուստի մասին, տանից դուրս եկաւ և քարշ եկաւ այն կողմը, որտեղ կանգնել էր նաւը: Նրա նիհար կերպարանքը, որ յենուում էր փայտին և հազիւ հազ քայլերն էր փոխում, աւելի շուտ մի ուրւականի էր նման... Հագիւ հասնելով հերոսների մօտ, նա անզգայ ընկաւ դետնին: Բոլորն էլ յուզւած էին նրա տեսքից: Իսկ երբ նորից ուշքի եկաւ, նա կանչեց աղերսագին:

«Ոհ, դուք, թանկագին հերոսներ, եթէ դուք նրանք էք, ում մասին գուշակել էինձ պատգամախօսը, օգնեցէք ծերուկիս: Վրիժառու աս-

ուածները ոչ միայն կուրացնելով պատժեցին
ինձ, այլ և զրկեցին կերակրից, որ իմ բերանից
խլում են զարհուրելի թոշունները: Չը կարժէք
թէ ձեր օգնութիւնն հայցողը մի օտարագրի է,
գա Փինէոսն եմ, Ագենորի որդին և ձեր հայրե-
նակիցը: Առաջ ես արքայ էի թրակիայում և
Բորէասի որդիք, որոնք այժմ եկել են ձեզ հետ,
իմ կին Կլէոպատրայի կրտսեր եղբայրներն են»:

Այս լսելով Կետոսը, հողմերի ասուած Բո-
րէասի զաւակներէից մէկը, ընկաւ ծերունու գիր-
կը և երգեց, որ իր եղբօր հետ կազատի նրան
սոսկալի տանջանքներից: Այնուհետև հերոսնե-
րը սկսեցին ճաշկերոյթ պատրաստել:

Հէնց որ արքան ձեռք տուաւ կերակրին, հող-
մի պէս վրա թափւեցին անիծեալ թոշուններն
ու լափեցին ամենը: Չուր աղաղակում և աղ-
մուկ էին հանում շուրջը կանգնած հերոսները—
թոշունները չէին վախենում. միայն երբ այլևս
ոչ մի կտոր չը մնաց, վեր կացան սեղանից ու
թռան, օդը լցնելով սոսկալի գարշահոտութեամբ:
Այն ժամանակ թև ունեցող Բորէասագունները,
Կետոսն ու Կալայոսը նրանց ետևից ընկան մեր-
կացրած սուսերներով: Չևսը նրանց անսպառ ուժ
տուաւ, առանց որի նրանք չէին կարողանայ հաս-
նել Հարպիաներին, որովհետև այդ թոշունների
թուիչքից անազին հողմ էր բարձրացել:

Երկար հալածում էին նրանք սաւառնող թռու-
չուններին ու վերջապէս այնքան մօտեցան, որ

կարող էին հեշտութեամբ սպանել նրանց, բայց
այդ ըրպէին նրանց առաջ կանգնեց Չևսից ու-
ղարկած Իրիս ասուածուհին և ասաւ.

«Չրսպանէք Հարպիաներին, հօր Չևսի այդ
շներին: Երբևում եմ ձեզ որ այլևս երբէք այդ
թոշունները ձեռք չեն տայ Ագենորի զաւա-
կին»:

Բորէասի զաւակները հնազանդւեցին աստ-
ւածունու խօսքերին ու ետ դարձան իրենց նա-
ւի մօտ:

Այդ միջոցին գորովագուծ արգոնաւորդնե-
րը թշուառ Փինէոսին էին խնամում: Նրանք մոր-
թեցին մի ոչխար և նորից ճաշկերոյթ սարքե-
ցին: Ագահութեամբ վրա ընկաւ սոված ծերու-
նին թարմ, մաքուր մսի վրա և իրեն թւում էր
թէ երազումն է, այնքան անսովոր բան էր նրա
համար այն, որ կարող է հանգիստ քաղցը յա-
գեցնել:

Երբ մի քիչ ուշքի եկաւ, նա սկսեց հերոս-
ներին գուշակել նրանց ճամփորդութեան ապա-
գան:

«Դուք ձեր ճամփին,— սկսեց նա,— կը պա-
տահէք մի նեղ ծովանեղուցի մէջ Սիմպլեգադ-
ների: Դրանք երկու ժայռեր են, որ չեն հաս-
նում ծովի յատակին, այլ միշտ լող են տալիս
և իրար են զիպչում: Եթէ չէք կամենում որ
մկների պէս ճխւէք, պիտի դրանց միջով լող
տաք աղաւնու արագութեամբ: Յետոյ կը հաս-

1002
1084

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1922
ՊՈՅՈՒՆԻՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

նէք Մորիաղնա, ուր մուտքն է դէպի ստորեր-
կրեայ աշխարհը, և աւելի հեռու կերթաք, բազ-
մաթիւ ստորջրեայ ժայռերի և անապատների
մօտից, և վերջապէս կը հասնէք Կողբիս, ուր կա-
տաղի Փասիսը իր փրփրալից այիքները թափում է
ծովը: Այնտեղ կը տեսնէք Այէտոս արքայի հը-
րաշայի պալատը և դարևոր կաղնին, որի վրա
կախած է ոսկէ գեղձը, ու գիշեր ցերեկ վիշա-
պը պահում պահպանում է այդ գեղձը: Չեր ձեռ-
նարկը վտանգաւոր է, բայց Ափրոդիտէն կօզնի
ձեզ աջողութեամբ տուն դառնալու:

Հերոսները կամենում էին աւելի հարց ու
փորձ անել գուշակ ձերունուն, բայց վերագար-
ձան Բորէասագուններն և յայտնեցին արքային
Իրիսի խօսքերը:

Պորին երախտագիտութեամբ Փինէոսը բա-
ժանեց իր ազատարարներից, և նրանք ճամփա
ընկան նոր և նոր վտանգներին ընդառաջ:

Տասն և չորս օր նրանք լողում էին հիւսիսա-
յին քամու գօրութեամբ՝ աղօթելով և զոհեր մա-
տուցանելով: Յանկարծ լսեցին ինչոր աղմուկ: Դա
իրար հարուղ Միմալեգազների ձաթձթոցն էր:

Տիփիսա ղեկավարը ղեկը բռնեց, իսկ Եւփե-
մոս հերոսը նաւի ցուռկին կանգնեց՝ մի ա-
ղանի ձեռքին: Եթէ աղանին անփնաս կանց-
նի ժայռերի միջով, ինչպէս գուշակել էր Փի-
նէոսը, — ուրեմն նրանք էլ պիտի կարողանան ան-
երկիւղ նաւել:

Ժայռերը նորից իրարից հեռացան: Եւփե-
մոսը բաց է թողնում աղանուն, և բոլորը սպա-
սում են շնչակտուր... Աղանին մէջտեղ է սա-
լանում... իսկ ժայռերը արդէն մօտենալ են
սկսում, ալիքները աղմկայոյզ աւելի ու աւելի
են բարձրանում... օդը լցւում է աղմուկ որո-
տով: Վերջացաւ. ժայռերը իրար հպեցին... Ա-
ղանին թռաւ միջից անփնաս, միայն պոչի ծայ-
րը կտրած մնաց:

Փորձը աջող էր. Տիփիոսը ուրախ ուրախ
քաջալերում է թիավարներին — պէտք է շտապել,
որովհետև նեղուցը նորից ազատ է: Քլթքլթան
ալիքները յափշտակում ձգում են նաւը այս
ու այն կողմ: Սոսկալի վտանգը ծանրացել է
հերոսների գլխին...: Այն է առաջ է շարժ-
ւել նաւը, դիմացի ալիքները վրա են վազում նո-
րից ետ մղում նրան: Բայց փորձառու Տիփիսաի
ղեկը ճարպկօրէն իր գործն է տեսնում, և նաւը՝
մէկ վեր ելնելով, մէկ էլ ցած սուզւելով ալիք-
ների կատարներով սլանում է արդէն ահռելի
ժայռերի միջև: Ուժերին զօռ տալով աշխատում
են թիավարները, բայց ժայռերն արդէն մօտիկ
են և ամեն բոպէ կարող են ճխել նրանց: Մնա-
մակալ Աթէնաս աստուածուհու յանկարծակի
զարկը փրկում է նրանց. նաւը արագ ծլկւում է
ժայռերի միջև, և ժայռերը նրա ետևից իրար
են սեղմւում, միայն ղեկի ետևի մասին կաշէլով:
Հերոսների առջև անհուն անծայր ծով է: Յըն-

ծուլթեան ճիշ է դուրս թռչում բոլոր կրծքերից:

«Այժմ էլ ոչ մի վախենալու բան չունենք, — ուրախ բացականչում է Տիփիասը, մնացածը, Փինէոսի ասելով, մեզ հեշտութեամբ կաշողի»:

Յասօնը միայն գլուխը մռայլ թափահարեց և այդ բացականչութեանը պատասխանեց. «Ձուր փորձեցի աստածներին, ընդունելով Պելիասի առաջարկը, որը ձեզնից շատերի կեանքն էր խլելու»:

Էնկերները միայն ժպտացին այդ խօսքերի վրա և ուրախ զլարթ շարունակեցին ճամփան:

Ճամփին մի դժբախտութիւն նրանց պատահեց. հաւատարիմ ղեկավար Տիփիասը տկարացաւ և մեռաւ, նրան պիտի օտար երկրում թաղէին:

Նոր ղեկավար ընտրեցին Անկենսին:

Շատ օրեր նրանք նաւեցին, անցնելով զանազան անյայտ երկիրների ու ազգերի մօտով: Երբ եկան Արէտիագէ կղզին ու ափ իջան, տեսան այնտեղ երկու պատանի ցնցոտիներով: Մէկը նրանցից դիմաւորեց հերոսներին ու բացականչեց, «Ոհ, ազնւագարժ մարդիկ, օգնեցէք թշուառ նաւաբեկեալներին, կերակուր ու շոր տւէք մեզ»: Յասօնը խոստացաւ նրանց օգնել և սկսեց հարցու փորձ անել թէ սրտեղից են:

«Դուք երևի լսել էք Փրիքսի մասին, որը Կողքիս էր բերել ոսկէ գեղմը» — հարցրեց պատանին... «Այէտոս արքան պսակել էր նրան իր աղջկայ հետ, իսկ մենք նրա գաւակներն ենք: Իսկ իմ անունը Արգոս է: Մեր հայրը յանկար-

ծամահ եղաւ և մենք նրա կամքին հնազանդելով ուղևորւեցինք մեր պապերի երկիրը, Որքոմենոս, որ պահւած գանձերը բերենք այնտեղից»:

Ուրախ ողջունեց Յասօնը իր ազգականներին. չէ՞ որ նրանց և իր պապերը հարազատ եղբայրներ էին: Այա պատանիները պատմեցին, որ իրենց նաւը խորտակել է և իրենց էլ ալիքները այս կղզին են նետել: Հերոսները նրանց հաղորդեցին իրենց մտադրութիւնը և հրաւիրեցին մասնակցել իրենց ձեռնարկին: Բայց պատանիները սարսափահար պատասխանեցին: «Բայց չէ՞ որ Այէտոսը դաժան է, նա արևի աստած Հելիոսի զաւակ է և աստածային զօրութիւն ունի: Անհամար ազգեր հպատակում են նրան Կողքիսում, իսկ գեղմը պահում է հանելի վիշապը»:

Հերոսներից շատերը գունատեցին այս խօսքերից, բայց էակոսի որդի Պելէոսը բացականչեց. «Ձը կարծէք թէ մենք էլ կը հպատակենք Կողքիսի տիրոջը: Մենք էլ աստածների զաւակներ ենք: Եթէ յօժարակամ չը տւեց մեզ գեղմը, մենք բռնի ուժով կը յափշտակենք»:

Միւս օրը նրանք առաջ գնացին. պատանիներն էլ, որոնց նրանք զգեստ տւեցին, նրանց հետ ուղևորւեցին:

Եւ ահա վերջապէս մօտեցան Կողքիսը սոսոկող Փասիսի գետաբերանին:

Չախ կողմը Կովկասն և Այէտոսի պալատն

էր ձգւում, իսկ աջ՝ երևում էին Արէսի դաշտն ու անտառը, ուր անքուն վիշապը ոսկէ գեղմն էր պահպանում:

Մտնելով սուերոտ ծովածոցը, հերոսները խարիսխ ձգեցին, և շուտով մէկը միւսի ետևից խորուն մտան:

4. ՅԱՍՕՆԸ ԱՅԷՏՈՍԻ ՄՕՏ

Արշալոյսը արթնացրեց նրանց և պատրաստելով նրանք խորհուրդ արին: «Լսեցէք ինձ. իմ բարեկամներ, — ասաւ նրանց Յասօնը, — ֆիացէք դուք բոլորդ նաւի վրա, իսկ ես Տելամոնի, Աւգէոսի և Փրիքսի գաւակների հետ մենակ կերթամ քաղաքն ու կը ներկայանամ Այէտոսի պալատը: Կը փորձեմ համոզել որ յօժարակամ յանձնի մեզ գեղմը: Իսկ եթէ չի զիջանի, իր ուժի վրա վստահելով, մենք նրա խօսքից կը հասկանանք թէ ինչ պիտի այնուհետև անենք: Գուցէ նրա սրտի վրա ազդի մեր պաղատանքը. չէ՞ որ մի ժամանակ նա համաձայնեց պատասպարել իր յարկի տակ Փրիքսին»:

Հերոսները հաւանութիւն տւին Յասօնի խօսքերին և նա՝ Տելամոնի, Աւգէոսի և պատանիների ուղեկցութեամբ, գաւազանը ձեռքին թողեց նաւը գնաց:

Երբ մօտեցան Կիրնէական դաշտին, նրանք սարսափեցին տեսնելով կախած դիակների ահա-

զին րազմութիւն: Դրանք յանցագործներ կամ սպանւած օտարագզիներ չէին, ինչպէս նրանք կարծեցին. դրանք մեռածներ էին, որոնց Կողքիսում մեղք են համարում գետնի մէջ թաղել կամ այրել: Նրանց կախում էին այնպէս, որ օղը չորացնի նրանց մարմինները, և միայն կանանց են կողքիսեցիք թաղում գետնի մէջ:

Քանի որ հերոսները դնում էին քաղաքի միջով, — հովանաւորող Հերաստուածունին պատել էր նրանց խիտ մառախուղով, և այդ մառախուղը ցրեց միայն այն ժամանակ, երբ մօտեցել էին արքայական պալատին: Զարմանքով նայում էին հերոսները չը տեսնւած շինութեան վրա, որ պարզարւած էր քանդակած սիւներով, ու բակի վրա, ուր շքեղ ծառերի հովանու տակ չորս շատրւան էր խփում: Մէկ շատրւանից կաթ էր հոսում, միւսից՝ գինի, երրորդից՝ անուշահոտ իւղ, չորրորդից՝ ջինջ, բիւրեղանման ջուր, ամառը սառուցի պէս սառը, իսկ ձմեռը՝ տաք: Այդտեղ կանգնած էին և պղնձէ ցուլեր, որոնց բերաններից բոց էր դուրս թափւում, և մօտը ընկած էր մի գութան, գուտ երկաթից շինած:

Այդ բակից նրանք անցան սիւնազարդ դահլիճը, որի երկու կողմը անթիւ սենեակներ կային: Մէջտեղ գտնուում էին երկու գլխաւոր օթեաններ, մէկի մէջ՝ ինքն Այէտոսն էր ապրում էր կնոջ հետ, միւսում՝ նրա որդի Աբսիրտէսը: Հարևան օթեաններում ապրում էին երկու արքա-

յազուն աղջիկները, Փրիքսի այրին Քալկիոպէն և կրտսերը՝ Մեդէան: Մեդէան հմայութիւնների աստուածուհի Հեկատէի քրմուհի է և ամբողջ օրը անց էր կացնում նրա տաճարում: Այդ օր սակայն Հերայի թելադրութեամբ մնացել էր տանը:

Իր սենեակից դուրս գալով քրոջ սենեակն անցնելու համար՝ նա յանկարծակի հանդիպեց ներս մտնող հիւրերին: Բարձրաձայն բացականչեց նա և վախեցրեց քրոջը, որն իսկոյն նրա ձայնի վրա դուրս վազեց և շտապեց նրա մօտ: Բայց հէնց օր նայեց Քալկիոպէն հերոսներին, ուրախութեան մի անգուսպ ճիչ դուրս թաւաւ նրա կրծքից: Հերոսների մէջ նա տեսաւ իր զաւակներին: Ուրախութեան արտասուքն աչքերին ընկաւ նա նրանց գիրկը և երկար համբուրում էր նրանց:

Չայները լսելով, դուրս եկաւ և Ալէտոսը իր կին Իդիայի հետ և շուտով ամբողջ բակը լցւեց ցնծացող ժողովրդով: Աննկատելի ներս պրծաւ այդտեղ և Երոսը, սիրոյ աստուածուհի Ափրոդիտէի զաւակը, և արագ թաք կենալով Յասօնի կոնակի ետև՝ իր նետն արձակեց շեշտակի Մեդէայի սիրտը: Նետահար, անխօս կանգնած էր աղջիկը՝ մի անհասկանալի յուզմունքով: Դէմքը այրւում էր կարծես տենդից և կուրծքը շնչում էր ծանր: Երբեմն նա իր հայեացքն էր ձգում չքնաղ Յասօնի վրա և մի կրկիչ թախիծ սղմում էր նրա սիրտը: Բայց ամբողջ այդ աղմուկի

միջին ոչ ոք չը նկատեց աղջկայ մէջ կատարւած փոփոխութիւնը: Ծառաները արագ պատրաստեցին արքայական սեղանն ու հիւրերը նըստեցին կերակուր վայելելու ու գինի խմելու: Ճաշի ժամանակ Արգոսը պատմեց իր արկածների մասին և Ալէտոսի կամացուկ հարցին և նոյնպէս կամացուկ պատասխանեց.

«Յասօնն ու այս բոլոր այր մարդիկ եկել են բեզնից ոսկէ գեղմը պահանջելու: Յասօնի նենգամիտ հօրեղբայր Պելիասը որ սրա գահն է յափշտակել, ուղարկել է սրան այդ պատուէրով, հաւատացած լինելով որ թէ սա և թէ սրա բոլոր ընկերները կը ոչնչանան, առանց բեզնից գեղմը ձեռք բերելու: Բայց սրանց նաւը, որ շինւած է Աթէնասի օգնութեամբ, ուրիշ նաւերի պէս չէ. այնպէս ամուր է կազմւած, որ ոչ մի հողմից չի վախենում, և արգոնաւորները հեշտութեամբ են նրան ղեկավարում: Յունաստանի ամենաքաջ հերոսները հաւաքել են նաւի վրա Հերայի հրամանով»: Արգոսը մէկ մէկ աւաւ հերոսների անուններն և բացատրեց արքային Յասօնի ինչպէս իրեն ազգական լինելը:

Երբ այս ամենը լսեց Ալէտոսը զայրոյթով լցւեց նրա սիրտը թոռների դէմ. նա համողւած էր, որ նրանց թելադրութեամբ են եկել իր մօտ այդ օտարակտնները: Յասումից բոցավառող աչքերով՝ նա բացականչեց.

«Աչքիցս կորէք, շարամիտներ: Ոչ թէ

գեղմի համար էք եկել այստեղ, այլ գահս ինձ-
նից խելու: Եթէ դուք այս բոպէիս ինձ հիւր չը
լինէիք և իմ սեղանիս բազմած, լեզուներդ մէկ
մէկ պոկել կը տայի, ձեռք ու ոտներդ կտոր
կտոր կանէի...»

Այդ հայհոյանքները լսելով՝ Տերամոնը տե-
ղից վեր թռաւ և ուզում էր նոյն տեսակ խօս-
քերով պատասխանել, բայց Յասօնը կանգնեց-
րեց նրան ու մեղմութեամբ ասաւ արքային.

«Ներիր մեզ, արքայ: Մենք ոչ թէ նրա
համար ենք եկել, որ քեզ գահընկէց անենք,
ո՞հ ո՞չ: Մեզ այստեղ բերել է մեր դժբախտ
ձակատագիրն ու Պելիասի խորամանկ հրամա-
նը: Վերագարծրու մեզ ոսկէ գեղմը և մենք
պատրաստ ենք ինչով կուզես քեզ մեր ե-
րախտագիտութիւնը ապացուցելու: Եթէ պատե-
րազմ պատահի կամ ուզենաս հարևան ազգերից
որեւէ մէկին քեզ հնազանդեցնել, — առ մեզ քեզ
հետ, և մենք վստահ ենք որ կը յաղթենք»:

Այսպէս էր ասում Յասօնը և արքան չը գի-
տէր՝ ինչ անի — մահի մատնի արգեօք եկւորնե-
րին թէ՛ նախ փորձի նրանց ուժը: Մի քիչ մտա-
ծելուց յետոյ նա վերջինս վճռեց և արդէն ա-
ւելի հանգիստ ձայնով ասաւ.

«Ի՞նչու են այդ անուելի խօսքերը: Եթէ դուք
խակ որ աստուածներից էք ծագում և ուրիշների
համար էք կուռում, — կարող էք ձեր ոսկէ գեղմը
ստանալ: Ծշմարիտ բաշասիրտ մարդկանց ես ա-

մեն ինչ կը տամ: Բայց նախ ես կամենում եմ
փորձել ձեզ և յանձնել ձեզ մի աշխատանք, որ ես
միայն ինքս եմ կարողանում անել, այնչափ նա
դժւար և վտանգաւոր է:

«Արէսի դաշտում արածում են երկու ոսկե-
պճեղ ցուլեր, որոնց ոնգներից բոց է ժայթքում:
Նրանցով ես վարում եմ դաշտը և վարել պրծ-
նելուց յետոյ ախօսների մէջ վիշապի տտաֆներ
եմ ցանում, և այդ տտաֆներից բուսնում են
զրահաւորած հսկաներ: Նրանք ինձ ամեն կող-
մից շրջապատում են և ես նրանց բոլորին էլ
սպանում եմ իմ նիզակով: Վաղ առաւօտեան լը-
ծում եմ ես ցուլերը փութանիս մէջ և երեկոյ-
եան դէմ հանգստանում եմ կուրից: Եթէ դու,
օտարական, այդ աշխատանքը կանես — նոյնօրն
և եթ կարող ես գեղմը ստանալ և տանել բո ար-
քայի մօտ»:

Երկար նստած էր Յասօնը մտախոհ, բայց
վերջապէս ասաւ.

«Ընդունում եմ առաջարկդ, թէ և դժւար է,
և հպատակում եմ ինձ այստեղ բերող անհրա-
ժեշտութեանը: Չէ որ ամենավատն ինչ կարող
է ինձ սպասել — մահն է»:

«Լաւ, — արտասանեց արքան, — բայց տես,
լաւ մտածիր, կարող ես արդեօք կատարել այն,
ինչ որ յանձն ես առնում: Եթէ ոչ, լաւ է թող-
նես ինձ ու գնաս քո աշխարհը»:

Սեղանից վեր կենալով, Յասօնը գնաց դուրս

իր ընկերները և Արգոսի հետ, որը նշան առաւ իր եղբօրն որ նստած մնայ իր տեղում: Գեղեցկութիւնով և արիութեամբ փայլելով՝ զընում էր երիտասարդ հերոսը և հիացած հայեացքով ճամփա էր զնում նրան Մեղէան՝ իր պատուհանի մօտ կանգնած: Աղջկայ բոլոր մաքերը նրա մօտ էին թռչում, հոգին ամբողջովին նրանով էր լցւած: Դառը լաց եղաւ նա՝ մենակ մընալով:

«Ինչո՞ւ սիրտս կակծից կտոր կտոր է լինում, — բացականչում էր նա: — Իմ ի՞նչն է այդ մարդը: Եթէ նոյնիսկ ամենալաւը լինէր բոլոր հերոսներից — մէկ է, պիտի կորչի: Այո, այդպէս կը լինի... Եւ այնուամենայնիւ... Ոհ, երանի թէ կարողանայի փրկել նրան մահից: Ոհ դու, պաշտելի Հեկատէ, օգնիր նրան անմիտս վերադառնալու: Իսկ եթէ նրան վիճակած է սոսկալի ցուրերին գոհ գնալ, թող գոնէ իմանայ նա, որ ես չեմ ուրախանայ նրա մահի վրա»:

Հէնց այդ բոպէին Արգոսը ասում էր Յասօնին. «Գուցէ քեզ բարկացնի իմ խորհուրդը, բայց ես այնուամենայնիւ կամենում եմ քեզ ասել: Ես ճանաչում եմ մի աղջիկ, որ գիտէ Հեկատէի հրաշալի հմայքները: Եթէ մեզ աջողակ մեր կողմը թեքել նրան, չեմ կասկածում որ դու յաղթող կը վերադառնաս կուրի դաշտից: Եթէ կամենում ես, ես իսկոյն կերթամ նրա մօտ»:

«Եթէ քեզ այդ լաւ է թւում, համաձայն

եմ, — պատասխանեց Յասօնը, — բայց վատ է մեր բանը, եթէ ամբողջ մեր փրկութիւնը կինն է»:

Այս որ ասում էր, արդէն նաւի մօտ էին, և Յասօնը հաղորդեց իր ընկերներին այն, ինչ որ իրեն ասել էր Այէտոսը: Մտահոգ նայեցին նրանք իրար երեսներին: «Գիտես ինչ, — սկսեց վերջապէս Պելէոսը, — եթէ քո մէջ ուժ ես զգում կատարելու այն, ինչ որ խոստացել ես, պատրաստիր կուրի: Իսկ եթէ կասկածում ես և վրատան չես, աւելի լաւ է թող այդ գործը, մեզ վրա յոյսդ մի դնի, որովհետեւ մեզ հօ անշուշտ սպասում է մահը»:

Այս երկչոտ խօսքերը լսելով, Տելամոնն և ուրիշ չորս հերոսները վեր թռան դժգոհ և սխրագործութեանց ծարաւով բռնւած, բայց Արգոսը հանդարտացրեց նրանց և ասաւ. «Թոյլ տէք գնամ մօրս մօտ և խնդրեմ որ համոզի իր քրոջը օգնել մեզ իր հմայքներով: Միայն նրա օգնութեամբ կարող ենք աջողութեան յոյս ունենալ»:

Դեռ չէր վերջացրել Արգոսն իր ճառը, որ մի աղաւնի՝ գիշատիչ ուրուրի անից փախչելով, թռաւ նաւը: Յանկարծ նա սլացաւ Յասօնի վրա ու մտաւ նրա ծոցը, մինչդեռ ուրուրը ընկաւ նաւի յատակին: Այդ յիշեցրեց հերոսներին Փինէոսի խօսքերը թէ Ափրոդիտէն կօգնի նրանց աջողակ տուն վերադառնալու, և նրանք որոշեցին որ աղաւնին, աստուածուհու այդ սիրելի թռչնակը, աջողութիւն է գուշակում: Ուրախ ու-

րախ գնաց Արգոսը իր մօր մօտ, իսկ հերոսները նաւը ափ հանեցին ու սկսեցին նրա վերադարձին սպասել:

Այդ միջոցին Այէտոսը հրաւիրել էր կողքի-սեցիներին գաղտնի խորհրդի և պատմում էր օտարականների գալուստի պատճառի մասին և թէ ինչ է ինքը նրանց առաջարկել:

Իսկոյն որոշուում է որ հէնց որ օտարականների առաջնորդ Յասօնը կընկնի ցուլերի կուրի մէջ, նաւը պաշարեն ծառերով և այրեն մնացած եկւորների հետ: Սոսկալի մահ էր պատրաստում նա և իր թոռների համար:

Մինչ այդ Արգոսը եկաւ իր մօր մօտ, պաղատելով որ համոզի քրոջը իրենց օգնել: Քալկիոպէն խղճաց Յասօնին և համաձայնեց յայտնել քրոջը հերոսների խնդիրը:

Այդ ժամանակ Մեդէան պառկած էր իր անկողնուում, և ծանր երազներ էին նրան տանջում: Երազում թւում էր իրեն թէ ինքն է կուրի բռնել ցուլերի հետ և յաղթում է նրանց, բայց ծնողները չեն կամենում գեղմը տալ Յասօնին, որովհետև ոչ թէ ինքը, այլ Յասօնը պիտի յաղթէր ցուլերին: Ծագում է սոսկալի մի վէճ: Մեդէային է յանձնւած այդ խնդիրը լուծել, և ինքը օտարականի կողմն է պահում... Սպառնալից կանչում են զայրացած ծնողները իրեն վրա—և այդ աղաղակից աղջիկը զարթնում է: Յուզւած, կամենում է նա գնալ քրոջ մօտ, բայց չի վստահանում

և ետ դառնալով գրեթէ դռան մօտից, խելագարի պէս ընկնում է անկողնու վրա և հեկեկում:

Ստրուկ աղախիներից մէկը այդ հեկեկանքը լսելով վազում իմաց է տալիս Քալկիոպէին՝ իր տիրուհուն խղճալով:

Իսկոյն զալիս է Քալկիոպէն իր քրոջ մօտ և գտնում նրան արտասուելիս: «Ի՞նչ է քեզ պատահել, իմ անգին քոյրիկս, կարեկցութեամբ դիմեց նա հեկեկացող Մեդէային. երկինքը տկարութիւնն ո՞ր չի ուղարկել: Ասա ինձ, վիշտդ յայտնիր»:

Շառագունեցին Մէդէայի այտերը այդ խօսքերից և ամօթխածութիւնը թոյլ չէր տալիս նրան մի խօսք արտասանելու: Վերջապէս ամօթխածութեանը յաղթելով՝ նա սկսեց խօսել. «Մի սոսկալի երազ տեսայ. հայրս սպանեց քո զաւակներին այն օտարականների հետ: Ո՛հ, երանի թէ չը կատարւի այդ չարագուշակ երազը»:

Երկիւղը պատեց խեղճ մօրը, նա ծնկաչոք ընկաւ քրոջ առջև և աղաչում պաղատում էր նրան փրկել իր զաւակներին և աղատել հօր զայրոյթից: Երկար լաց էին լինում քոյրերը՝ իրար գրկած: Վերջապէս Քալկիոպէն ասաւ.

«Իմ զաւակների սիրուն օգնիր օտարականին, տունը նրան որ և է պահարան (թըլիսման) որ օգնէր նրան ցուլերին յաղթելու: Իմ որդի Արգոսը այս բոպէիս եկել էր ինձ մօտ ասելու որ Յասօնը քո օգնութիւնն է խնդրում: Իսկ ես

Հ.Ա.Խ.Լ. ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ա. Խ. Լ. Հայրենիքի Գրադարան
7/31-1922
Հ. Ա. Խ. Լ. Հայրենիքի Գրադարան

նոյնը խնդրում եմ քեզ իմ որդիների սիրուն»։
Պայծառ կարմրութիւնը ծածկեց Մեղէայի
գէմքը քրոջ այս խօսքերից և անակնկալ ուրա-
խութիւնով լցւած՝ աղջիկը բացականչեց.

«Երգւում եմ քեզ, թող երբէք աչքերս չը
տեսնեն արշալոյսի շողքը, եթէ չը փրկեմ գա-
ւակներիդ։ Վաղը լուսաբացին ես կերթամ Հե-
կատէի տաճարը և այնտեղ կը սպասեմ օտարա-
կանին, որ տամ նրան պահարանը. այդ պահա-
րանը նրան ուժ կը տայ յաղթելու սոսկալի ցու-
լերին»։

Երախտագիտութեամբ լի Գալկիոպէն դուրս
գնաց քրոջ մօտից ու որդուն յայտնեց ուրախա-
լի լուրը։

Իսկ Մեղէան ամբողջ գիշեր ծանր տարա-
կուսանքի մէջ անցկացրեց, ինքը իր հետ կուե-
լով.

«Արդեօք շատ բան չը խոստացայ,—ասում
էր նրան մի ներքին ձայն,— պէտք է արդեօք
այդ անեմ մի օտար տղամարդու համար։ Ոչ,— ո-
րոշեց նա այնուհետև— ես կը փրկեմ նրան, բայց
հէնց այն օրը, երբ նա աջողութեամբ կը յաղթի,
ես ինքս ինձ կը սպանեմ։ Բայց միթէ այդ կը
փրկի ինձ։ Միթէ վատ համբաւս չի տարածւի
ամբողջ Կողքիսում»։

Այսպէս Մեղէայի սրտի մէջ մաքառում էին
հակառակ զգացմունքները, իրար փոխարինելով,
մինչև որ վերջապէս չը յաղթեց ամենահզօր տի-

Հ. Ա. Խ. Լ. Հայրենիքի Գրադարան

«Ազգային գրադարան»

NL0319380

88¹

C-90